№ 59 ՈՒՐԲԱԹ ՄԱՐՏԻ 20 — 1909 — ՈՒՐԲԱԹ ՄԱՐՏԻ 20 № 59

ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Базарная уп. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՁԱՐՄԱՆԱԼԻ ԷԺԱՆ

ԱՌԵՒՏՈՒՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ

ԷԺԱՆ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Մեսամսէ բլուզկաներ 60% զեղչով

Տղամարդկանց սպիտակեղէն 50% զեղչով

Կանանց եւ երեխ. սպիտակեղէն 40% զեղչով

ԵՂԲ.

Ա. եւ Եա. ԱԼԹԿԱՆԳԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ

Գօլովինսկի պրօսպէկտի վրա

Ծախվում է խանութի սարք ու կարգը և խանութը տրվում է վարձով։

128. 0—5

Թիֆլիսի վաճառականների Աւագ Այր. Ն. ՄԻԼՕՎԸ

Խնդրում է Թիֆլիսի պ. պ. վաճառականներին, որոնք ընտրել են դասակարգային վկայականներ, ներկայ գտնվել

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ,

որը տեղի կունենայ կիրակի, մարտի 22-ին, առաւօտեան ժամը 10-ին, Թիֆլիսի Բօրսային շինութեան մէջ, Արմենական բազար, տուն Քաղաքային Վարչային Ընկերութեան։

Զբաղմունքի առարկաներն են.

1) Վաճառականական գումարների 1908 թ. ելից և մտից հաշիւը։
2) Մանթաշեան Առևտրական Դպրոցի 1908—1909 ուսումն. տարվայ դրութեան մասին հաղորդագրութիւն։
3) Կանանց առևտրական դպրոցի կանոնադրութեան ծրագրի քննութիւնը։
4) Մանթաշեան Առևտրական Դպրոցի համար յատուկ շինութիւն ձեռք բերելու հարցի քննութիւնը։
5) Առևտրական Դպրոցի 1908—1909 ուսումն. տարվայ դրութեան մասին եղած հաշուետուութեան քննութիւնը։
6) Ընտրութիւն մի անդամի Մանթաշեան Առևտրական Դպրոցի Հոգաբարձական Խորհրդի, չորս տարվայ ժամանակով, ի տեղի անդամ Գ. Գ. Շադինովի, որի լիազօրութեան ժամանակը լրացել է փետրվարի 13-ին 1900 թ.։
7) Ընտրութիւն Վերաստուգիչ Յանձնաժողովի երեք անդամի և մի փոխ-անդամի 1909 թ. համար։
8) Ընտրութիւն վաճառականների Աւագի և նրա երկու օգնականների 1909 թ. համար։

(ու. կ.) առ. 232. 2—1

ԳՕԳՕԼԵԱՆ ՕՐԵՐ

II

Գոգոլի հեղինակութիւններից, որքան մեզ յայտնի է, թարգմանված են հայերէն նրա նշանաւոր «Վերաքննիչ» կամ «Բեվիզոր» և «Ամուսնութիւն» պիէսները, «Տարաս Բուլբա» վէպը, «Վաղեմի կալուածատէրեր» պատկերը, «Խելագարի յիշատակարանից» հոգեբանական ուսուածքը։

«Վերաքննիչը» մի քանի անգամ խաղացվել է հայկական բեմի վրա և գործել է տպաւորութիւն հանդիսականների վրա։ Հանգուցեալ դերասան Գ. Պետրոսեանը համարում էր այդ պիէսը իր խաղացուցակի մէջ և աշխատում էր վերարտադրել ռուսական բեմի լաւ կատարողների խաղը, աւելացնելով նրանց իր սեփական ըմբռնումները։

«Տարաս Բուլբա» վէպը թարգմանված է սրանից 17 տարի առաջ՝ 1892 թ.ին Մ. Աբեղեանի ձեռքով և լոյս ընծայված Հրատարակչական Ընկերութեան հրատարակութեամբ։ Այդ վէպը կիսագիւղացական բովանդակութիւն ունեցող երկասիրութիւնների շարքին է պատկանում և գաղափար է տալիս Գոգոլի տաղանդի մի քանի բնորոշ գծերի մասին։

«Ամուսնութիւնը» լոյս տեսաւ մի քանի տարի սրանից առաջ՝ 1904 թ.ականին։ Դա երկուգործողութեամբ մի պիէս է, որ անշուշտ չունի «Վերաքննիչի» նշանակութիւնը, բայց և այնպէս հետաքրքրաշարժ է կենցաղագրական տեսակէտով։

Գոգոլի գրուածքների մեծագոյն մասը մնացել է առանց հայերէն թարգմանութեան և հայ կրթված հասարակութեան մեծագոյն մասը ծանօթ է նրանց հետ ընագիրների ընթերցանութիւնից։

Գոգոլի գուրս բերած տիպերի մէջ կան հնացածներ, որոնք այլևս կեանքի մէջ աչքի չեն ընկնում. բայց մեծագոյն մասը, մանաւանդ գաւառական խաւերում, դեռ պահպանել է իր գոյութիւնը կամ բոլորովին անխախտ կամ միայն ժամանակակից կեանքի արտաքին ազդեցութիւններից փոքր ինչ կերպանափոխված, պահպանելով տիպի և նրա բնորոշող գծերի էութիւնը։

Թէ ընդհանրապէս կովկասեան և թէ մասնաւորապէս հայկական իրականութեան մէջ շատ և շատ կան գոգոլեան տիպերից, որոնք դեռ այսօր գործում են մեր կեանքի ասպարէզներում և ազդում իրերի այս ու այն վիճակի վրա։

Եւ Գոգոլի գրուածքների ընթերցանութիւնը կարող է ուսանելի և հետաքրքրական լինել մեր օրերում, ինչպէս շահագրգռում են նրա «Վերաքննիչի» տիպերը, թէ հասակաւոր և թէ մանուկ սերնդին և ուսանողներին ընդհանուր և դպրոցական բեմերի վրա։

Գոգոլեան յօբելեանը տօնվում է հանդիսաւոր կերպով Ռուսաստանի զանազան մասերում և գտնում է արձագանք նաև մեզանում։ Մենք գնահատել ենք ռուսական լաւ գրողներին և նրանց համարել ենք մօտ մեր սրտին և յարգել ենք նրանց տաղանդը, ստեղծագործական կորովը և մատուցած ծառայութիւնները գրականութեան և հասարակական կեանքի զարգացման գործին։

Ա. Քալանթար

ՃԳՆԱԺԱՄԸ ՎԵՐԱՑԱՒ

Բէլգրադ, 18 մարտի

Առաւօտեան ժամը 10-ին սկսվեց սկուպշչինայի դռնփակ նիստը։ Կայանում ազգային բանկի հարցի արմատական լուծման, հաւանօրէն կը կազմեն կառավարական կուսակցութիւն, կօալիցիայի միւս մասը կը կազմէ օպպոզիցիոն կուսակցութիւն։ (Հ. Գ.)

—

Կ. Պոլսից «Нов. Время» լրագրին հեռագրում են. «Մարտի 13-ին բօրսան և դիւանագիտական շրջանները սպասում էին պատերազմի յայտարարման։ Մարկիզ Պալլավիչինի յայտնեց լրագիրների աշխատակիցներին, որ խզումն է սպասվում։ Դրութիւնը կրիտիքական էին համարվում սերբիական միսսիայում։ Կէսօրին Բերլինից հեռագիր ստացվեց, որը յայտնում էր, թէ Ռուսաստանը հրաժարվեց իր նախկին հայեցքներից և ընդունեց միացումը։ Այդ լուրը ցնցող տպաւորութիւն գործեց բոլոր շրջաններում։ Այստեղ այդ հրաժարման վրա նայում են, որպէս Ռուսաստանի կատարեալ պարտութեան վրա։ Թիւրքաց լրագիրները միաձայն նկատում են, որ Ռուսաստանը այսուհետև ջնջված է մեծ պետութիւնների ցուցակից»։

—

Բերլին, 18 մարտի

Ռէյխստագը շարունակեց արտաքին գործերի մինիստրութեան բիւջէի քննութիւնը։ Վիճաբանութիւնների ժամանակ ֆօն-Շէնը հաղորդեց, որ մտադրութիւն կայ հաստատել քաղաքական բաժանմունքի վերատեսչի պաշաօն։

Մի քանի պատգամաւորներ գանգատվեցին, որ ռուս-գերմանական սահմանագլխով անցնում են գնչուներ, որոնք ծանր լեռ են ազգաբնակութեան համար։ Ֆօն-Շէնը պատասխանեց, որ գերմանական կառավարութիւնը բանակցութիւններ կը սկսէ ռուսաց կառավարութեան հետ այդ հարցի առիթով, իսկ գնչուների վարքի հարցը վերաբերում է ոստիկանական ժամմինների իրաւասութեան։ (Հ. Գ.)

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Կ. Պոլիս, 17 մարտի

Երզրզի բերդապահ զօրքի զուաւների մի բատալիոն ապստամբվեց իբր թէ այն պատճառով, որ զուաւների զօրաբաժինը լրացնում են անատոլիական նորակոչ զինուորներով։ Ուրիշների խօսքով ապստամբութեան պատճառն այն է, որ զօրաբաժինը Երզրզից հեռացրին և միացրին նորակազմ 22-դ դիվիզիայի հետ։ Զօրանոցները շրջապատված են երկու հետեակ և հեծելազօր գնդերով և հրացանաձիգների մի բատալիօնով։ Անձնատուր լինելու վերջին հրաւէրին ապստամբները պատասխանեցին նրանով, որ անձնատուր եղան։ (Հ. Գ.)

—

Կ. Պոլիս, 18 մարտի

Երզրզի վերջին ապստամբութեանը մասնակցած հինգերորդ գնդի զինուորներից 50 հոգի զինուորական դատարանի որոշմամբ տեղափոխվեցին Տրիպոլիս։ (Հ. Գ.)

—

«Շուրայի Իւմմէթի» մարտի 6-ի համարում կարդում ենք.

«Պարլամենտական ներքին գործերի յանձնաժողովը քննեց Փոքր-Ասիայի հիւսիսային նահանգները (Հայաստան) գնալիք բարեկարգիչ յանձնաժողովի կանոնադրութեան ծրագիրն և բազմաթիւ փոփոխութիւններ մտցնելով ընդունեց։

«Պարլամենտական պատերազմական գործերի յանձնաժողովը զրաղվեց գաւառների հայ առաջնորդներից ստացված հեռագիրների քննութիւնով։ Այդ հեռագիրներում խնդրվում է, որ հայերին թոյլ տրվի այս տարի անձամբ զինուորական ծառայութիւն կատարել և ոչ թէ դրա փոխարէն որոշված հարկը պահանջվի նրանցից»։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Վերջին տեղեկութիւնների համաձայն, ինչպէս հեռագրում է «Н. Вр.» լրագրի Թղթակիցը, շահի պահակախումբը բաղկացած է 1500 հետեակ զինուորներից, 600 ձիաւորներից, 100 թնդանօթաձիգներից։

Մայրաքաղաքի պահակ զօրքը բաղկացած է 800 կօզակներից, 2,300 զինուորներից, 350 թնդանօթաձիգներից, 300 ժանդարմներից։ Ընդամենը 5,950 հոգի։ Ռուսական դեսպանատունը պաշտպանվում է 25 ռուս կօզակներով, իսկ միւս դեսպանատները՝ Լեախօվի բրիգադայի կօզակներով։

—

Բագուի «Թարակկին» իր մարտի համարում հաղորդում է, որ վերջերս Բաշտ ուղարկված կօզակների մեծ մասը թուրքերէն և պարսկերէն են խօսում. նրանք քաղաքի փողոցներում խումբ-խումբ մարդ են գալիս և տեղական ժողովրդին դժգոհութիւն պատճառում։

ՊՕԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Կ. Պոլիս, 11 մարտ

Պարլամենտի անդամների մէջ, շատ փոքր ժամանակամիջոցում, իրարու ետև պակսեցան երեք մահմեդական անդամներ։ Ճամբան բացաւ, ամենէն առաջ, Մանիսայի զէֆիք բէյ, որ կարգուած էր մինիստր արդարադատութեան գործերու։ Թէև կանդամակցէր, միևնոյն ատեն, օսմ. կոմիտէին, բայց ան ճանչցուած էր բաւական ազատամիտ. իր քաղաքական հայեցքները աւելի լայն էին, զերծ թթու ազգայնամոլութենէ։ Իբրև մինիստր, երկար ժամանակ չունեցաւ երկրին արդարութեանը մէջ բերել նոր արդարութիւն, առողջ և ողջամիտ արդարութիւն, կաշկանդումներէ, մոլեռանդութենէ անխառն արդարութիւն։ Ու մինչ կը սպասուէր, որ երկիրը բարիքներ տեսնէ այդ նոր մինիստրէն, անկէ՝ որ տարիներով իր կաշին, իր անձին վրայ կրած էր անարդարութեան ուժը, ճնշումը, վրայ հասաւ կարճատև հիւանդութիւն մը և գտաւ ան խաղաղութիւն գտնել հոն, ուր արդարութիւնը ենթակայ չէ ոչ ցեղային տեսլութեան, ոչ մոլեռանդութեան, և ուր ոչ խլաւժի խտիր կայ իսկապէս և ոչ քրիստոնեայ հաւատացեալի։

Անոր ետևէն ճամբայ ելաւ Տիգրանակերտի երեսփոխանը՝ Պիրինջլի-զադէ Ա-ռիֆ էֆէնդի։ Իր ընտրութիւնը կատարուած էր արդէն ամեն տեսակ խարդաւանանքներու մէջ։ Ինքը տակաւին ոտքը Պօլիս չդրած, իր ետևէն հասան թղթակցութիւններ, առաջնորդական հեռագիրներ՝ տեղեկութիւն տալու, որ այդ մարդը բուն մարդկային ճիւաղ մըն է. ինքը իր ձեռքովը կազմակերպած էր, Տիգրանակերտի մէջ, հայերու ջարդը, ինքն էր դարձեալ, որ, սահմանադրութեան օրերու մէջ, առաջ բերաւ Վերանշէհիրի կոտորածը. և թէ՝ ատ ինքն է, որ բոլոր կեանքին մէջ ծծած է հայերու կեանքը, հարստութիւնը։

Իր ընտրութեանը վաւերացումին օրը՝ հայ երեսփոխանները բոլոր ուժով ընդդիմացան՝ թոյլ չտալու, որ արիւնի, կոտորածի ճիւաղ մը իրաւունք ունենար բազմելու սահմանադրական աթոռի վրայ, և թէ՝ իրաւունքի անունով ձայն ունենայ գժոխային բերան մը, որ ամէն փչած էր կեանքերու վրայ, չխնայելով նոյնիսկ օրօրոցի երախաներուն, բայց Ահմէդ Բիզայի խորհրդարանը այնքան բարեխիղճ գտնուեցաւ, որ կարևորութիւն չտրուեցան Տիգրանակերտէն գրուած, հեռագրուած և հայ երեսփոխաններուն միաբերան կրկնած դառն բողոքներուն, անհերքելի փաստերուն ու արդարացի դիտողութիւններուն։ Վաւերացուեցաւ ան, ճիւաղը, իբրև պարլամենտի անդամ, բազմեցաւ սահմանադրական աթոռի վրայ, ունեցաւ իր խորհրդարանական իրաւունքը, ձայնը, քուէն, խօսքը։

Այնուամենայնիւ, հայ թերթերը զբաղեցան իրմով այնուհետև ալ. հեռագիրները, թղթակցութիւնները շարունակեցին տեղալ իրենց բոլոր վառ, կարմիր երանգներովը։ Ու այդ մարդը որ կը կարծէր թէ ալ ազատուած է հայերու ճանկէն, ամեն օր ունեցաւ նորագոյն յուզումներ, կատաղութիւններ, թէ ո՞վ կըլլան այդ հայերը, որ կը համարձակին իրեն դէմը տակաւին ձայն բարձրացնելու հրապարակաւ։

Ու իրենց գործը տեսան այդ ներքին, զսպուած կատաղութիւնները խոշոր մարմնի մը վրայ, արիւնային խառնուածքի մը գործարաններուն մէջ։ Առտու մը անշշունջ, անշարժ գտնուեցաւ իր անկողնին մէջ Տիգրանակերտի պարլամենտական անդամը, ան՝ Ահմէդ Բիզայի սրբագործած Ալփասլանը։

Այդ անակնկալ մահը այնքան յուզում-

նալից եղաւ ազգայնամոլներու շրջանակի մէջ, որ թունաւորու

թեան։ Օրինակները՝ որքան կուզէք. յիշեցէք նրա վերաբերմունքը դէպի Ս. Ի. Վիտէի զեկուցումը Հեռաւոր Արևելքի մասին և նրա դիրքը ռուս-եապոնական պատերազմի ժամանակ։ Հրապարակախօսական ասպարիզում նա բացի գլուխ վարժ ձևից, յայտնի առողջ դատողութիւնից և վելիկօրօսի խորամանկութիւնից՝ միայն տուել է իրանից թխած բաներ (отсебятина), օրինակ՝ թէ աղքատ պետութեան համար պատերազմը աւելի հեշտ է, քան հարուստի համար...

Սուվորինը յայտնի է նաև որպէս վիպագրող և թատերագիր։ Նրա պիէսները էֆֆեկտաւոր են, սակայն ոչ-գրական, միայն արժէքով, այլ յարմար բեմի վրա խաղալու (պ. Բուրինինի հետ գրած Медея-ն խաղացվում է և հայ բեմի վրա)։ Հեղինակը լաւ ուսումնասիրել է բեմական արհեստը։ Նրա թատրոնական տեսութիւնքննութիւնները խոշոր տաղանդով և գեղարուեստօրէն գրված՝ անշուշտ անմահացրել են Սավինայի, Դուզէի և այլ խոշոր դերասանների խաղը՝ ապագայ սերունդների մէջ։

Ծերունի յօբելեարը ունի և մի խոշոր ակտիվ. նա յայտնի է որպէս անարծաթասէր և լուսաւոր հրատարակիչ. այստեղ շանը չէ նրան դեկավարողը. նա կարողացել է այս գործում յետ մղել և կուսակցական հաշիւները։ Ամբողջ Ռուսաստանը ծանօթ է նրա հրատարակած «Էժանագին գրադարանի» հետ՝ մօտ 400 հատորիկներ՝ ռուս և օտար դասական գրողներից. նա հրատարակել է այնպիսի հոյակապ գրուածներ, ինչպիսին են գեներալ Շիլդերի Պաւել I, Ալէքսանդր I և Նիկոլայ I կայսրների կենսագրութիւնները, Բրիկների կարևոր գրուածները Պետրոս Մեծի և Եկատերինէ II-ի մասին, հանգուցեալ Պ. Եֆրեմովի խմբագրութեամբ Պուշկինի գրուածները, Սօմովի գեղարուեստական ժողովածուները և այլն։ Սուվորինի հրատարակութեամբ է լոյս տեսնում և պատմական «Истор. Вѣст.» ամսագիրը և մի շարք օգտաւէտ տեղեկատու-վիճակագրական հրատարակութիւններ։

Պ. Զ.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԱՒԱՌԻՑ

Գիւլագարակ (Լօռու մաս), 10 մ.

Գիւղիս դպրոցի ուսուցիչ Ռ. Իսկենդէրեանի հանդուն ջանքերով և երիտասարդների սրտագին աջակցութեամբ աջողվեց կազմել տեղուս Թիֆլիսի Հայ Տնայնագործական Ընկերութեան Գիւլագարակի ճիւղը։ Անդամագրվեցին 10 հոգի։ Նոր բացված ճիւղը ձեռնարկել է բաց անել գիւղում մի ջուլհականոց, որի համար դիմել է ուր հարկ է։ Թէ ինչ անհրաժեշտութիւն և կարևորութիւն ունեն նման ձեռնարկութիւնները մեր տնտեսապէս քայքայված գիւղացու դրութեան բարւոքման համար՝ աւելորդ եմ համարում յիշատակել, որովհետև շատ է գրվել և խօսվել այդ մասին։

Երիտասարդների ձեռնարկութիւնը գովելի է և խրախուսանքի արժանի։ Գիւղացիների համակրալից վերաբերմունքն ու ուրախութիւնը ապացոյց են գործի օգտակարութեանն ու անհրաժեշտութեանը։ Ցուսով ենք, որ ուսուցչի և երիտասարդների ձեռնարկութիւնները անսայթաք առաջ կերթան և աջողութեամբ կը պակվեն։

Գիւղացիական այս համատարած տնտեսական անկման առաջն առնելու և բարւոքել ջանալու պարտականութիւնը արդէն իսկ ծանրանում է գիւղի գիտակից անհատների, երիտասարդների վրա, որոնք իրանց չնչին դրամագլուխները կօպերատիվ հիմունքներով միացնելով, նայած տեղական կլիմայական յարմարութիւններին, կարող են գիւղատնտեսական զանազան ճիւղերը շահագործել, արհեստանոցներ հիմնել և այն գիտականօրէն մատչելի դարձնել գիւղացուն։

Թ. Հ. Տնայնագործ. Ընկ. Գիւլագարակի ճիւղի անդամները մտադիր են այս գարնանից սկսել և մեղուաբուծական պարապմունքներ՝ ջուլհականոցին կից, որի աջողութիւնը երաշխաւորում է գիւղատնտեսական միւս ճիւղերի շահագործումը։

Այժ և տոկունութիւն գիւղական գործիչներին։

Ռիսկ

Ղալաչա, 14 մարտի

Ղազախի գաւառի բազմաթիւ հայ և թուրք գիւղերում տարածված են տեսակ-տեսակ վարակիչ հիւանդութիւններ. հիւանդութիւնը սարսափելի էր մանաւանդ Ղշլոթան գիւղում. գիւղը մեծ զոհեր տուեց ամեն սեռից և հասակից. մեր գիւղերում այնքան մեծ է տգիտութեան աղէտը, դարերի ընթացքում այնքան է մեր գիւղացիներին նա քարացրել, նրա մարդկային ընդունակութիւններից զրկել, որ այժմ XX դարում, երկիւղ են կրում բժշկական օգնութեանը դիմելու. «Եթէ յայտնենք կառավարութեանը, նա մեր առողջներին էլ սպանել կը տայ՝ համարելով վարակված։ Ղշլոթանցիք, տեսնելով որ շատ են մեռնում, մարդիկ ուղարկեցին և Հաղբատի ս. Նշանը բերել տուին. իրանք ասում են, որ խաչը բերելուց յետոյ հիւանդութիւնը թեթևացել է, բայց մենք հաստատ աղբիւրներից իմացել ենք, որ ամենաշնորհ երիտասարդներն այժմ անյուսալի կերպով հիւանդ են...

Մարտի 4-ին ամպի զոռոցից յետոյ ամբողջ գիշերը և հետևեալ օրը յորդ անձրև տեղաց, ձիւնը ամբողջովին հալեց և դաժան ու երկարատև ձմրանը ըշեց դէպի հեռաւոր սարերի կատարները։ Այնպէս կանոնաւոր կերպով են բուսել մեր արտերը, որ նայողներին հոգեպէս միխիթարում են։

Կառավարութիւնը իր անցեալ տարվայ տուած նպաստի 1/3-ական մասը հաւաքում է, որը գիւղացիներին բաւականին նեղ դրութեան մէջ է դրել։

Հացի էժանութիւն է, բայց տաւարն ու ոչխարը շատ թանգ են. հացի պուդը արժէ 1 ր., կովը 40 ր., ոչխարը՝ 6—7 ր., խոզը 15—16 ր.։

Մելքիսեդէկ քահ.

Ախալցխա, 8 մարտի

Այսօր, Կարապետեան տղ. դպրոցի դահլիճում, ցերեկվայ ժամը 1-ին տեղի ունեցաւ ծնող. ժողով, որտեղ նոյն դպրոցի ուսուցիչ Ստ. Կարապետեան դասախօսեց «Երեխայի նախադպրոցական (մինչև 8 տարեկան հասակը) դաստիարակութեան մասին»։ Մեր դպրոցների ուսուցչական մարմնի կազմակերպած երկրորդ ծնողական ժողովն էր սա։ Առաջինը տեղի ունեցաւ նոյն տեղում յունվարի վերջերին «Երեխան մօր արգանդում և համր տպաւորութիւնների շրջանում» նիւթի մասին, բայց դասախօսող օրիորդի՝ հայոց լեզուին լաւ չը տիրապետելու պատճառով անցաւ շատ տաղտկալի և անհետաքրքրական։ Այսօրվայ դասախօսը նախ մի քանի խօսք ասաց ուսման նշանակութեան մասին և, իբրև տեղացի, ջրեց ախալցխացոց մէջ եղած այն հին կարծիքը, թէ՝ «ինչ պէտք է ուսում, մեր տղան ոչ տէրտէր է դառնալու և ոչ վարժապետ», շեշտելով որ ուսումը տալիս է ապրելու միջոցները։ Ապա խօսեց դաստիարակութեան մասին՝ ծանրանալով նրա երեք գլխաւոր ճիւղերի վրա—1) ֆիզիքական, 2) բարոյական և 3) մտաւոր դաստիարակութեան։ Դաստիարակութեան յիշեալ երեք ճիւղերի մասին պ. դասախօսը խօսեց բաւական հասկանալի լեզուով և ամփոփ։ Դահլիճում հաւաքվել էր երկսեռ բազմութիւն, բայց ոչ ցանկալի քանակութեամբ։

Ի նկատի ունենալով, որ ախալցխացի հայ մանուկները ոչ միայն զուրկ են ընտանեկան քիչ շատ կանոնաւոր դաստիարակութիւնից, այլ ուղղակի սատանում են սխալ և ոչնչակար դաստիարակութիւն, ցանկալի էր, որ ամեն միջոցներով նրանց ծնողներին բերէին նման դասախօսութիւններին։ Դասախօսութիւնը տևեց մի ժամից քիչ աւելի, որից յետոյ պ. դասախօսն առաջարկեց ընտրել մի նախագահ՝ վիճաբանութիւնները կառավարելու համար, բայց ժամանակի ուշ լինելու պատճառով դա տեղի չունեցաւ. իսկ եթէ դասախօսութիւնը սկսվեր ճիշդ 12 ժամին, ինչպէս յայտարարված էր, երևի վիճաբանութիւններ տեղի կունենային, որոնք անշուշտ շատ հետաքրքրական պիտի լինէին։

Ի վերջոյ պիտի նկատենք, որ այս դասախօսութիւնը պիտի տեղի ունենար փետրվարի 21-ին կամ 28-ին, բայց դասախօսից և դպրոցական վարչութիւնից միանգամայն անկախ պատճառներով յետաձգվեց այսօրվան։

Մուրադ Ասպետ

Երևան, 15 մարտի

Երէկ, առ. ժ. 11-ին, ճեմարանի տեսուչ Մ. Բերբերեանի ուղեկցութեամբ, Երևան հասան ճեմարանի լսարանական ուսանողները, մօտ 25 հոգի, որոնք բոլորն էլ տեսչի հետ եկել էին ոտով յատկապէս Երևանի աչքի ընկնող տեղերը և հիմնարկութիւնները տեսնելու նպատակով։ Ինչպէս լսեցինք ուսանողներից, Մ. Բերբերեանը հաստատապէս որոշել է առաջիկայ ամառը գիտական մի ընդարձակ էքսկուրսիա կատարել դէպի Բաթում, Կ. Պոլիս, Յունաստան, Եգիպտոս և այլն,—որպէսզի ուսանողներին ծանօթացնի հայկական զանազան շրջանների պատմական տեղերի և հիմարկութիւնների հետ։ Եթէ այդ իրագործվի, ուսանողները գործնական կերպով կը ծանօթանան և կուսումնասիրեն այն վայրերը, որոնց մասին իրանք լսել և կարդացել են առանց իրական տեղեկութեան։ Ինչպէս յայտնի է, այդպիսի մի էքսկուրսիա յանձն առաւ կարապետ վարդապետը մի քանի տարի առաջ լսարանական ուսանողների հետ դէպի Արցախ, Լոռու և Գանձակի շրջանները, նոյնպիսի մի էքսկուրսիա կատարվեց Բալաղեանի տեսչութեան օրով Երևանի թեմ. դպրոցի Ե. և Զ. դասարանների աշակերտների կողմից ուսուցիչ պ. Քուշմանեանի առաջնորդութեամբ դէպի Գեղարդ, Անի և Բէշքիլիսա։ Այսպիսի մի փոքրիկ ճանապարհորդութիւն էլ անցեալ տարի Երևանի Գայիանեան օր. դպրոցի և քաղաքիս աղջկանց գիմնազիայի հայ աշակերտուհիները իրանց ուսուցչուհիների հետ կատարել են դէպի Էջմիածին և շրջակայքը։

Լսում ենք, որ Գայիանեան օր. դպրոցի տեսչուհի տ. Ամատունին հաստատապէս որոշել է առաջիկայ զատկական տօներին աշակերտուհիներին տանել Էջմիածին։ Եւ այդ բոլոր էքսկուրսիաները նշանաւոր չափով նպաստել են աշակերտուհիների և աշակերտների զարգացման՝ ընդլայնելով նրանց ժառաւոր հորիզոնը, կրթել են նրանց ընկերական և բարոյական զգացումները։

Դժբաղդաբար այդպիսի մի համակրելի ձեռնարկութիւն հարկաւոր ուշադրութեան չէ արժանանում մեր դպրոցական վարիչների կողմից, թէև ցանկալի էր, որ վերջինները օրինակ վերցնէին Մ. Բերբերեանից և իրաքանչիւր տարի մեր երկրի մի որոշ շրջանի ուսումնասիրութեան համար խելացի էքսկուրսիաներ կազմակերպէին։

Դ. Աղազադեան

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՍՄԱ

(Հեռագրով)

Պետերբուրգ, 18 մարտի

75-րդ նիստը բացվում է առ. ժամը 11 և 15 րոպէին։ Նախագահում է իշխ. Վօլկոնսկին։ Կարդացվում է օրակարգը։

Շուբինսկին զեկուցանում է դատական լարենորոգումների մանաժողովի եզրակացութիւնը Զօլոգդայինանանդների Եարանսկի և Ուստսիսօլսկի գաւառներում, Արխանգէլսկի, Տօմսկի, Տօբոլսկի, Ակմօլինսկի, Սեմիպալատինսկի և Ուրալսկի շրջաններում երդուեալների դատարան հաստատելու մասին։

Մանաժողովը առաջարկում է հետևեալ բանաձևը. «Անհրաժեշտ ընդունելով շուտափոյթ երդուեալների դատարան հաստատել Ենիսէյսկի և Իրկուտսկի նահանգներում և Անդրբայկալեան շրջանում, նաև ցանկալի գտնելով այդ ձևի դատարաններ հիմնել հնարաւորութեան չափով Պրիվիսլանսկի և Պրիբալտիյսկի երկրի նահանգներում և կայսրութեան մնացած բոլոր տեղերում, Դուման անցնում է հերթական գործերին։»

Ժուկօվսկին մատնանշում է, որ Լեհական թագաւորութեան վերաբերութեամբ մասնաժողովի ցանկութիւնը առաջարկել և արտայայտել են ոչ թէ լեհերը, այլ ռուս ներկայացուցիչների մեծամասնութիւնը, և «որքան էլ որ այդ ցանկութիւնը համեստ և զգոյշ լինի, մենք չենք կարող չողջունել ռուսական քաղաքական մտածողութեան որոշ ձևը (պակասում է)։ Միանգամայն ուրոյն կերպով յայտնելով այդ ցանկութիւնը, մանաժողովի մեծամասնութիւնը իր հայեացքներով տարբերվում է կառավարական քաղաքականութիւնից, որ հնարաւոր չէր գտնում երդուեալների ինստիտուտ մտցնել Լեհական թագաւորութեան մէջ ոչ այն պատճառով, որ տեսնում էր, թէ լեհերը այդ ինստիտուտի համար բաւականաչափ պատրաստված չեն, այլ սոսկ այն պատճառով, որ նրանք լեհեր են, և ինչպէս այդպիսիներ, դատական պարտականութիւնները կատարելու ժամանակ լեհեր էլ կը մնան։ Դատելով համոզմունքով և խղճով, լեհերը, ի հարկէ, միշտ կը ձգտեն երդուել լեհ լեզուով, խօսել և մտածել լեհերէն։ Հենց այդ բանումն էլ տեսնում են ինչ-որ հակակառավարական սեպարատիզմ։ Իսկ մենք կարծում ենք, որ ժամանակով կառավարութիւնը կը փոխէ իր վերաբերմունքը և մենք կը ստանանք դատական կազմակերպութիւն, պետութեան շահերին, ժողովրդական զգացմունքների պահանջներին համապատասխանող։ Բայց ի՞նչ կը լինի այդ—յայտնի չէ։ Յայտնի է մի բան—որ դա չի լինի, քանի որ արդարադատութեան մինիստր կը մնայ այժմեան մինիստրը... (ձայներ՝ «ճիշտ է», «սխալվում էք»), ծափահարութիւն լեհական կօլօյում)։ Մինիստրի գործածած «աղբոտել» խօսքը անվայել է առանձին անհատների վերաբերութեամբ այս ամբիօնից. ևս առաւել դա անթոյլատրելի է ժողովուրդների վերաբերութեամբ (ծափահարութիւն)։ Այդպիսի խօսքերը վիրաւորական են միայն նրա համար, ով նրանց արտասանում է։ Ուստի և նրանց կրկնել և արդարադատութեան մինիստրին վերադարձնել ես չեմ անի (ձայներ աջակողմից՝ «օհօ, ցօ դօ բինձէ»). ծափահարութիւն կօլօյում)։ Այդպիսի խօսքերից յետոյ միանգամայն պարզ է, որ ցանկութիւնները կը մնան դատարկ ցանկութիւններ, և եթէ անդամ Դուման ամենավճռական ցանկութիւններ ընդունէ, նրանց գործադրութիւնը այժմեան մինիստրի օրոք չի լինի գնաս...»։ (Ծափահարութիւն կենտրօնում և ձախակողմում, աղմուկ և սուլոց աջողմում)։

Պուրիշկեվիչը տեղից բարձրաձայն աղաղակում է։

Նախագահ.—Դումայի անդամ Պուրիշկեվիչ. շատ կարճ ժամանակում դուք արդէն մի քանի նկատողութիւններ ստացաք. մի քանի անգամ ձեզ սպառնաց 38-րդ յօդուածը։ Անկասկած այդ բոլորը ձեզ համար քիչ է։

Պուրիշկեվիչ.—Քիչ է։

Նախագահ.—Ձեզ շրջանակներում պահելու համար,—ներեցէք խօսքերիս,—քաղաքավարութեան շրջանակներում (Պուրիշկեվիչը. «Ես չեմ կարող այդ լսել»), թոյլ տուէք, ես ձեզ խոնարհաբար խնդրում եմ անսալ եթէ ոչ սպառնալիքին, գոնէ խորին խնդրքիս—չը խանգարել դահլիճի կարգ ու կանոնը։ Հետևեալ անգամ, երբ ես ձեզանից ստիպված կը լինեմ անտեղի բան լսել, ես առանց խօսելու կառաջարկեմ ձեր վերաբերութեամբ գործադրել 38-րդ յօդուածը, որովհետև ամեն բան վերջ ունի (ծափ. կենտրօնում և ձախակողմում)։

Ընդունվում է վիճաբանութիւնները դադարեցնել։

Պուրիշկեվիչի և Դվօրեանինօվի խօսելուց յետոյ հանդէս է գալիս արդարադատութեան մինիստրը և, առարկելով հռետօրների նկատողութիւններին, պաշտպանում է կառավարական օրինագիծը։

Զեկուցանող Շուբինսկին բանաձևում է խօսածները։

Միլիւկով.—Մինիստրը ոչ միայն չօգտագործեց առիթից յետ վերցնելու իր ասած աւելորդ վիրաւորական խօսքերը, այլ և մեղ յայտնեց, որ այդ խօսքերը միացեալ կաբինէտի ամբողջ քաղաքականութեան արտայայտութիւնն են։ Ռուս մարդիկ կարծում են, որ այդպիսի խօսքեր ասելով, այդ տեսակ վիրաւորական խօսքեր, մի ամբողջ խումբ ռուս քաղաքացիների մասին, մինիստրը կատարեց հակահայրենասիրական վարմունք (աղմուկ աջակողմում)։ Նրանք կարծում են, որ նա այդ կատարեց այնպիսի բօպէին, երբ հայրենասիրական քաղաքականութիւնը առանձին ոգևորութիւն է պահանջում (աղմուկ աջակողմից) պաշտօնական գործերում։ Նա այդ խօսքերն ասաց այնպիսի ժամանակ, երբ Ռուսաստանը մեծագոյն ազգային ստորացումն է անցնում (ուժեղ աղմուկ աջակողմից)։

Նախագահը կանգնեցնում է Միլիւկովին և խնդրում է աջակողմեանները չաղմկել, որովհետև աղմուկի ժամանակ ոչինչ չէ կարելի լսել։

Միլիւկովը շարունակում է.

«Ռուս մարդը ատելութեան զգացմունքով համակվում է այդ առիթով, սակայն մի փոքր տարբեր, քան Բեսսարաբիայի իսկական ռուս պատգամաւորը։ Այն բօպէին, երբ նրանք տալիս են օտարազգիների անունը, հէնց այդ բօպէին նրանք թոյլ են տալիս օտարներին օրէնքներ թելադրել ռուսաց պետութեանը...» (Աղմկից ծափահարութիւններ ձախակողմում, ձայներ «բրաւօ»՝ աջակողմից)։

Նախագահը կրկին կանգնեցնում է հռետօրին, խնդրելով այդ հարցը չը շօշափել։

Միլիւկովը շարունակում է. «Արդարադատութեան մինիստրի յայտարարութիւնը, առանձնապէս ամբողջ կաբինէտի կողմից խօսելը, մաքրում է ճանապարհը դէպի ազգային ստորացումը։ Ես պնդում եմ, որ արդարադատութեան մինիստրը մեղաւոր է, որ համեստ և զսպված տոնը փոխվեց այն բողոքող և ատելութեան տոնին, որի վկաներ մենք այս բօպէիս եղանք վիրաւորված ազգութեան կողմից, ռուս մարդկանց կողմից (ձայներ՝ «ամերիկացիների կողմից»), իսկ հակազգային քաղաքականութեան և մեր ազգային պարտութեան պատասխանատուութիւնը ձգում եմ միացեալ կաբինէտի վրա»։ (Ծափահարութիւն ձախակողմում, սուլոց աջակողմում)։

Մասնաժողովի հերթական գործերի բանաձևն ընդունվում է։

Նիստը փակվում է ժամը 12 և 55 րոպէին։

(Հ. Գ.)

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Երևան, 17 մարտի

Մարտի 16-ին, Երևանի նահանգական դատարանում քննվեց Երևանի պետական կալուածների կառավարութեան գործավար Տիգրան Տէր-Աբրահամեանի սպանութեան գործը, որ տեղի էր ունեցել 1908 թ. հոկտեմբերի 15-ին Երևանում։

Դատարանը այդ սպանութեան մէջ մեղադրվող Զիլիխանովին վճռեց տաժանակիր աշխատանքի 6 տարի 8 ամսով և տարեկան 200 ր. նպաստ յօգուտ հանգուցեալի ընտանիքի։

Ա. Պողոսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

✦ Պետերբուրգից հաղորդում են, որ էջմիածնի սինոդի նախկին պրօկուրօր Ֆրենկելը, որ ներկայումս վարում է Եկատերինօսլաւի նահանգական բանտի տեսչի պաշտօնը, բռնվել է բազմաթիւ զեղծումների մէջ և ենթարկվելու է դատական պատասխանատուութեան։

✦ Այսօրվանից սկսվում են զօգօլեան օրերի տօնակատարութիւնները։ Զուբալովի ժողովրդական տանը ցերեկվայ ժամը 2-ին կը կայանայ զօգօլեան ցերեկոյթ Թիֆլիսի քաղաքային դպրոցների բոլոր աշակերտ-աշակերտուհիների համար։ Ներսիսեան հոգևոր դպրոցում տօնակատարութիւն տեղի կունենայ վաղը։

✦ Մարտի 18-ին Կովկասի Փոխարքային ներկայացաւ համառուսական ջրանցքային IX համագումարի պրեզիդիումը նախագահ քաղաքագլուխ Ձերբէզովի առաջնորդութեամբ։

✦ Այսօր, երեկոյեան ժամը 6-ին, կովկասագիտական բարձր դասընթացքներում (Ալէքսանդրեան այգի) տեղի կունենայ Վ. Տոտոմեանի վերջին դասախօսութիւնը քաղաքատնտեսութեան մասին։ Նոյն դասախօսի հետևեալ երկու դասախօսութիւնները, շաբաթ և կիրակի, տեղի կունենան միևնոյն դասընթացներում և նուիրված կը լինեն կօօպերացիայի հարցին։ Դասախօսութիւնները, ընդհանուր առմամբ հետաքրքրական լինելով, գրաւում են ուշադիր ունկընդիրներ։

✦ Ի լրումն մեր հաղորդած տեղեկութեան, կարող ենք աւելացնել, որ զատկական տօներին անդրկովկասեան երկաթուղիների ստորին և բարձր ծառայողներին պարգև տալու համար յատկացված է 165,915 ռուբլի։

✦ Ֆրանսիացի կապիտալիստների ներկայացուցիչ ինժենէր Մինկօվսկին, որ 4 միլիոն ռուբլու փոխառութիւն աջողեցրեց Եկատերինօսլաւ քաղաքի համար, հռոգրով խնդրել է Թիֆլիսի քաղաքագլուխից հաղորդել իրան, թէ ինչպիսի վերաբերութիւն և ինչ պայմաններով ցանկանում է կնքել Թիֆլիս քաղաքը։

✦ Այս տարվայ աշնանը Պետերբուրգում տեղի ունենալիք թռչնապահութեան ցուցահանդէսին Անդրկովկասի թռչնապահները ցոյց են տալու ամենալայն մասնակցութիւն։

✦ Դատական քննիչի կարգադրութեամբ, մարտի 17-ի երեկոյեան Թիֆլիսում ձերբակալեցին Թիֆլիսի նահանգական վարչութեան քարտուղարի պաշտօնակատար Ա. Զաթալբաշեանին, որ մեղադրվում է 7000 ր. արքունական փողեր վատնելու մէջ։ («Т. П.»)

✦ Կիրակի օրվանից Թիֆլիսում լոյս է տեսնելու վրացերէն լեզուով նոր ամսագիր «Արշիկի» անունով։

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

✦ Մօտ օրերս Մանթաշեանի ֆիրմայի Բալախանիի գրատնեակում երևան են հանված զեղծումներ։ Պարզվում է, որ կեղծ փաստաթղթերով 2—3 ամիսների ընթացքում վճարված է 7000 ռուբլի։ Ինչ որ Ալէքսանդր Սաֆարեան անունով մի մարդ, որը երբէք ծառայած չէ եղել Մանթաշեանի ֆիրմայում, բանուորական գրքոյկներով, զանազան մարդկանց անունով ներկայացել է և փող ստացել։ Վերջին անգամ, երբ նա Միրզա Բարխուդարեանի անունով գրքոյկ է ներկայացնում գանձապահին փող ստանալու, կեղծիքը բացվում է։ Նրան խնդրել կալանաւորում են բուրօվոյ վարպետի օգնական Սերգէյ Զուբարովի հետ միասին։ Վերջինս չէր ծառայում վերջին ժամանակներս, բայց կեղծված ստորագրութեամբ շարունակում էր ոռճիկ ստանալ։ Գրասենեակը կասկածում է, որ այդքան կարճ ժամանակամիջոցում Սաֆարեանը ու Զուբարովը կարող լինէին այդչափ խոշոր գումար ստանալ, ուստի կարծում է, որ այդ բանը կատարված է մի խումբ կազմակերպված շանտաժիստների ձեռքով։ Մի քանի փաստեր հիմք են տալիս մտածելու, որ շանտաժը սկսված է շատ վաղուց և որ այդպիսի կեղծ փաստաթղթերով ստացված գումար աւելի քան խոշոր պէտք է լինի։

Ի դէպ այդ առիթով դեռ ևս անցեալ օգոստոսին արձակված արհեստաւորները յայտնեցին գրասենեակին և խնդրեցին քննութիւն կատարել։ Վերջինս անուշադիր թողեց այդ յայտնութիւնը։ Բանուորները «Бакинск. Рабочій» լրագրի սեպտեմբերի համարներից մէկում ակնարկներ տպագրեցին այդ զեղծումների մասին, իսկ խմբագրութիւնը յայտնեց, որ իր ձեռքի տակ կան նոյնիսկ նիւթեր, որոնք մերկացնում են վարիչ անձանց մի քանիսի զեղծումները։

✦ Բաքուի հայ-թուրքական անկարգութիւնների գործը քննվելու է Թիֆլիսի դատատոնական պալատի 2-րդ քրէական բաժնում ապրիլի 17-ին, որի համար Բաքուի քաղաքագլուխը հրաւիրվում է իբրև դատական ներկայացուցիչ։

✦ Միրզոյէվների Սուրախանիի նաւթանքում մարտի 16-ից սկսել է պարբերաբար նաւթի ֆոնտան խփել։

✦ Մարտի 15-ին Բիբի-Էյբաթում Նոբելի նաւթանքում խփել է մի մեծ ֆոնտան։ Եօթ ժամվայ ընթացքում ստացվել է մօտ 300,000 պուդ նաւթ։ Մի քանի ժամից յետոյ ֆոնտանը դադարել է։

✦ Անցեալ կիրակի, մարտի 15-ին, Սուրախանակայա փողոցում, Բաֆայէլովի տանը ապրող Կոստանդին Տէր-Գասպարեանը (30—35 տարեկան) տնից դուրս գալով այլ ևս չէ վերադարձել։ Որոնումները մինչև այժմ անհետևանք են անցել։ («Баку»)

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԵՐԵԿՈՅԹ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՏԻՒՆ

Արտիստական ընկերութեան վերջին երեկոյթը տրվեց ի պատիւ Ջրանցքային համագումարի անդամների։

Սիրողների խումբը ներկայացրեց Էչեգարայի «Մեծ Գալիսօտ» դրաման չորս գործողութեամբ։ Պիէսը վերցված է սպանական կեանքից և պարունակում է էֆեկտային տեսարաններ։ Կատարումը աջող էր։

Ներկայացումից յետոյ բեմի վրա դրվեցին մի քանի կենդանի պատկերներ, որոնցից առաջինը ներկայացնում էր Թիֆլիսի քաղաքային դումայի անդամներին այն բօպէին, երբ նրանք ընդունում են ջրանցքային համագումարի անդամներին։

Ներկայ էր կովկասեան Փոխարքայ կոմս Վօրոնցով-Դաշկով իր ամուսնու հետ։

Թատրօնական դահլիճը ծայրից ծայր լիքն էր։

Սիրող

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Չորեքշաբթի, մարտի 18-ին, վրաց դերասանական խումբը խաղաց Ա. Ղազրէգի (Մօչխուբարիձէ) «Թագաւորազն Կոնստանտին» պատմական յայտնի 5 գ. դրաման։

Դրաման վերցված է 16-րդ դարի առաջին կիսի ժամանակներից, երբ թագաւորազն Կոնստանտինը, ապաւինելով ժամանակակից Շահ-Աբբասին, ուրացաւ քրիստոնէութիւնը և պարսից զօրքով եկաւ գրաւեց Կախէթիան և իր եղբօրը՝ վրաց թագաւորին ու հօրը սպանեց, գահը գրա-

ւելու համար։ Այս եզեռնի գլխաւոր պատճառը Քեթեան թագուհու սէրն էր, որին այդ միջոցով ուզեց տիրանալ Կոնստանտինը, սակայն ապարդիւն։ Պատերազմի ժամանակ պարսիկները պարտուեցին։ Քեթեան թագուհին, ընդունելով Շահ-Աբբասի հրաւէրը, գնաց Իսպահան, որին շահը առաջարկեց ընդունել իսլամը և իր կինը լինել։ Սակայն քաջարի թագուհին մերժեց այդ առաջարկը և տանջանքների մէջ աւանդեց հոգին։ Թագաւորազն Կոնստանտինը, զղջալով իր արարքի համար, թագուհուն պաշտպանելու նպատակով սուսերամերկ յարձակվեց շահի վրա, բայց նրան շրջապատող ծառաներից մէկը սպանեց Կոնստանտինին։

Ցաւօք սրտի պիտի ասել, որ դրաման խաղացվեց անբաւարար կերպով, որի գլխաւոր պատճառներից մէկը դերասանների դերեր չիմանալն էր։ Վրաց թատրոնի բեսերտուարի մէջ եղող պատմական պիէսաների շարքում այս դրաման շատ պատուաւոր տեղ ունի գրաւած։ Սակայն մեզ համար անհասկանալի մնաց, թէ ինչու՞ էր չափազանց կրճատվել, որով միանգամայն անհամացել էր պիէսը։ Զը նայած դերեր չիմանալուն, այնուամենայնիւ դերասաններից տ. տ. Կարգարէտելին, Սագինօնական և պ. պ. Գէլէվանովը, Մեսխին և Գունեան իրանց դերերը աջողութեամբ տարան։ Թատրոնը կիսով չափ դատարկ էր։ Artemon

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

«Does Woman Represent God», rév. Peter Z. Easton, Chicago. («Ներկայացնում է կինը Աստուծուն» վերապ. Պետէր Իսթն, Չիկագօ)։

Պարսկաստանի Թաւրիզ քաղաքում, 30 տարուց ի վեր, իբրև բողոքական միսսիոնար գործող Պետրոս եպիսկոպոս Իսթնը ուղարկել է մեզ իր մի աշխատութիւնը, տպված Չիկագօ քաղաքում, վերոյիշեալ վերնագրով։ Դա մի բրոշիւր է, բաղկացած 20 էջերից, որի մէջ յարգելի միսսիոնար եպիսկոպոսը կանոնց էմանսիպացիայի համար եղած շարժման խնդիրը քննում է կրօնական տեսակէտից, կամ Սուրբ Գրքի տեսակէտից։

Մի կողմ թողնելով այն հանգամանքը, որ աշխարհիկ և արմատական ուղղութիւն ունեցող մի լրագրի համար առանձին հետաքրքրութիւն չը պէտք է ներկայացնէ կանանց հարցի քննութիւնը կրօնական տեսակէտից, բայց վերապատուելի միստր Իսթնի բրոշիւրը շահեկանութիւն է ներկայացնում մի այլ տեսակէտից։ Բողոքական միսսիոնարները աշխատում են արձագանք տալ ոչ միայն եկեղեցական, այլ և սոցիալական, քաղաքական բոլոր հարցերին, ժամանակակից ժարգոնութիւնը յուզող, տանջող բոլոր հրատապ հարցերին։ Եւ, վերջապէս, չէ՞ որ եկեղեցու կարծիքն ևս հետաքրքրական և կարևոր է կանանց էմանսիպացիայի պէս մի կապիտալ հարցի վերաբերմամբ հաւատացեալ ժողովրդի համար։

Ի՞նչպէս է լուծում այդ հարցը Ս. Գիրքը, այն է Հին և Նոր Կտակարանը։ Տեսնենք ինչ է ասում միստր Իսթնը։

«Կանանց հարցը,—ասում է նա,—օրվայ հրատապ հարցն է. 40 կամ 50 տարի առաջ հազիւ մի ձեռքի ափի չափ մեծութիւն ունեցող ամպը այսօր ծածկել է ամբողջ երկինքը։ Այդ՝ այլևս կնոջ օրինական, ընկերական, քաղաքական կամ եկեղեցական վիճակի հարց չէ, այլ նա զրկում է ամբողջ երկինքն և երկիրը իր զանազան կողմերով։ Այժմ ամբողջ հատորներ են հրատարակուում այս խնդիրը հասկանալի ձևով բացատրելու համար. ուստի մենք մի խաչձև հարցում ենք ուղում անել, որ բովանդակ խնդրի հոգին կամ սիրտն է կազմում, այն է՝ «Ներկայացնում է կինը Աստուծուն»։ Եթէ մենք այս կէտը լուծենք, մնացածը ինքն ըստ ինքեան կը լուծվի»։

Այդ հարցումից յետոյ հեղինակը դիմում է Հին և Նոր Կտակարաններին և այնտեղից վկայութիւններ բերում, որոնք առհասարակ բոլորն էլ կնոջ ազատագրութեան դէմ են։ Թէ ինչ տեսակէտից է առաջնորդվել վերոիշեալ Իսթնը իր այս բրոշիւրը կազմելիս և ինչ է եղել իր նպատակը, այդ պարզ երևում է նրա եզրակացութիւններից, որ քաղուածօրէն առաջ ենք բերում.

«Մարդը ներկայացնում է Արարչին, իսկ կինը արարածին. կինը առաջանում է մարդուց այնպէս, ինչպէս արարածը Արարչից... Աստուածաշնչի մէջ ոչ մի օրինակ չը կայ, որով Աստուած կամ իր հրեշտակները երկային կնոջ ձևի տակ։ Պէտք է չը մոռանալ,—ասում է Իսթնը,—որ որքան էլ աշխատեն թագցնել այժմեան շարժումը ի նպաստ կնոջ քաղաքական ազատագրութեան, միշտ զուրկ չէ եղել ազատ սէր պահանջող թէօրիայից կամ այս ուղղութիւնը ունեցող ձգտումներից։ Աւելն ինչ վկայում է, որ աղատագրված կինը ոտնակոխ անելով բոլոր աստուածային օրէնքները՝ ոչ միայն մի զված և մաքրված տարր չի լինի ընկերութեան մէջ, այլ մի մարմնացեալ սատանայ կը դառնայ, Մեսալինայի և լէդի Մակբէտի մի խառնուրդ...»։

Վերապատուելի քարոզիչը իր ասածները հաստատելու համար վկայութիւններ է բերում շարունակ Աստուածաշնչից և Յովհաննու Յայտնութեան Գրքից. նա վկայութիւններ է բերում և Մանի, Մազդակ հերովսիապետներից Մօհաննայից, Բաբէկից, Հասան Սաբահից, Շամիլից, Բաբից և Մահտիից։

Ի հարկէ, ներկայ գիտութեան առաջ բոլորովին անկայուն է միստր Իսթնի հաւատալիքը, բայց ամբողջ բրոշիւրը ցոյց է տալիս, որ հեղինակը իր կարծիքն արտայայտում է խորին համոզմունքով, որ դա կարծիք չէ, այլ անընկճելի, անդրդուելի, ֆանատիկոսութեան հասած համոզմունք։ Ցաւենայն դէպս յարգելի է նրա անկեղծութիւնը։ Հ. Ա.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Ար՛ժ. Մեսրոպ վարդապետին*)

Շատ ուրախ եմ, որ պ. Բասմաջեանի դատն ալ ձեզ նման արժանաւոր պաշտպանի հովանաւորութիւնը կը վայելէ, բայց ցանկալի էր, որ ինքը հրապարակ գար այդ խնդրով ինձ համար ևս շահեկան ձեր ակնարկած հարցերուն վրայ լոյս սփռելու։ Ես դեռ 1905 թուականին առաջարկեր իմ հրապարակ իջնել կամ մամուլի միջոցաւ և կամ իր կողմանէ փոխանորդներ ընտրելով, սակայն նա իրեն յատուկ պատճառներով լռեր է։

Մի յօդուածով Էջմիածինը դժոխք անուանելուն պատճառաւ պ. Բասմաջեանի երեսը երկար տարիներ անարգ թուքերով ծեփ՝ լէ յետոյ, երբ անցեալ տարի սիրալիր գրկախառնութեամբ զերբար ջերմապէս համբուրեցիք, իմ նամակներս պ. Բասմաջեան ձեզ ցոյց տալէ յետոյ ինչու՞ այնքան բարի չեղաւ, որ ձեզ յանձնարարական մը ալ տար, որպէսզի ինձ մօտ գալով իր գրած նամակներն ալ անգամ մը աչքէ անցընէիք, որոնց մէջ դուք շատ հակառակ նորութիւններ պիտի տեսնէիք։ Դարձեալ պատրաստ եմ ցոյց տալու զանոնք ամեն անոնց, որոնք բացարձակ հրաման կը բերեն ինձ Բասմաջեանի ստորագրութեամբ, այլապէս չեմ զիջանիր անարգ կիրքերէ առաջնորդուած, բարեկամական նամակներ, որոնք սրբութիւններ են գիտակից մարդկանց համար, անխտիր թափել ամեն մարդու առջև, առանց ի նկատի ունենալու անկից ծագելիք խղճի և պատուոյ ահեղ պատասխանատուութիւններ։

Դուք չէք կարող այնքան անկեղծ ու ճշմարիտ բարեկամ եղած ըլլալ պ. Բասմաջեանին, որչափ ես էի մի ժամանակ, և երկրպագու «անոր ստացած ուսումնականի հռչակին», որչափ որ ես եմ մինչև այսօր, թէև նա շատ անարժան և վիրաւորական կերպով վարուեցաւ ինձ հետ։ Ես Բասմաջեանի այն բարեկամն եմ, որ կ. Պոլսոյ մէջ բանտարկուած ժամանակ գլուխս կախաղանի վանդի ենթարկած՝ ոչ միայն ազատեցի զինքը մշանջենական աքսորի վանդէն, այլև փրկեցի իր հետ ուրիշներու ալ անարգարար ոտնակոխ ըլլալու վանդին ենթարկուած պատիւը։ Եւ ի վերջոյ երբ իր ձեռնարկած գործին օգտակար ըլլալու համար Կովկասի ճանապարհորդութեան ընկերացայ առանց ոեէ փոխարինութեան, բարեկամական սիրոյս և յարգանքիս ապացոյցն էր որ տուի։

Եւ որովհետև ձեր պ. Բասմաջեանի անունով անորոշ գրուածքը կարող է հասարակութեան մտքին մէջ խոշոր երևակայութիւններու առիթ տալ, ուստի քանի մը խօսքով ալ կուզեմ այդ ճանապարհորդութեան համառօտ պատմութիւնը մէջ բերել։

Նախապէս գոյութիւն ունեցող որոշման մը համաձայն եկայ Կովկաս պ. Բասմաջեանի համար Անիի մէջ աշխատելու միայն չորս ամիս ժամանակով, պայմանաւ որ նա պիտի վճարէր իմ երթևեկարձի ճանապարհածախսը և պիտի հոգար մնումդս։

Արդէն մեր Անի գնալէն առաջ, Էջմիածնի մէջ, պարզուեցաւ որ պ. Բասմաջեանի տրամադրութեան տակ գտնուած գումարը շատ քիչ էր չորս ամիս առաջադրուած գիտական նպատակով աշխատելու համար, այդ պատճառով ալ, առանձնապէս պ. Բասմաջեանի խորհուրդով, դիմեցի հանգուցեալ կաթողիկոսին և խնդրեցի, որ մի քիչ աջակցութիւն ցոյց տայ այս օգտաշատ աշխատութեան, նիւթապէս օգնելով պ. Բասմաջեանին։

Կաթողիկոսը շատ սիրալիր կերպով խոստացաւ օգնել և շուտափոյթ կարգադրել հարկ եղածը։

Մեր՝ Էջմիածէն դէպի Անի մեկնելու պահուն վեհարանէն յանձնուեցաւ մեզի գոց նամակ մը՝ ուղղուած Անիի վանահայր Միքայէլ վարդապետին, յայտարարելով որ մեզ համար հարկ եղածը գրուած է նամակին մէջ։ Բայց ինչ զարմանք. երբ Անի հասանք, Մոտօի տոպրակին պէս՝ նապաստակի տեղ կատու դուրս եկաւ։ Ոչ մի օգնութեան խօսք չըլլալէն զատ, հազիւ իրեն համար պատուոյ ոտ մը հաց ճարող Միքայէլ վարդապետին կը խնդրէին այդ նամակով, որ մեզի օգնէ։ Այդ նամակն ալ մինչև այսօր իբրև հաղուագիւտ յանձնարարական Էջմիածնի վեհարանի՝ պահուած կը մնայ Միքայէլ վարդապետի քով։

Բնական էր, որ այս առեղծուածը լուծելու աշխատէինք, գիտնալու համար թէ ինչ հրաշքով փոխուած էր նամակի բովանդակութիւնը։ Հարկ համարուած տեղեր անմիջապէս գրուեցան նամակներ, և ստոյգ աղբիւրներէ տեղեկացանք, որ այսօրուան՝ Բասմաջեանի դիմաց յարգանքի դիմակով ծածկուող մէկ քանի սրբասուն միաբաններ յարմար առիթը գտեր էին զայն պատժելու, զիրենք դժոխքի միաբան անուանած ըլլալուն համար, և բուռն թափով բողոքելով արգիլեր էին այդ նպատակը։

Թէ որքանք էին այդ լուրի աղբիւրները, և Բասմաջեանի դէմ զինուող ախոյեան վարդապետները, այդ կը թողում իրեն պ. Բասմաջեանին, որովհետև ինձ հետ բնաւ կապ չունի։ Թ. Թօրամանեան

(Վերջը միւս անգամ)

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳ. ԳՈՐԾ.

18 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Առևտրի մինիստրը այսօր մեկնեց Մոսկվա մինիստրութեան ենթակայ հաստատութիւնների գործերը քննելու համար։

Մինիստրների խորհուրդն ընդունեց Դումային ներկայացնելու համար ժողովրդական դպրոցների տեսուչների և վերատեսուչների ոռճիկները աւելացնելու օրինագիծը։

Օրվայ ընթացքում խօլերայով հիւանդացան 2 հոգի. մեռնողներ չը կան։

Հաղորդում են, որ հեղեղը անագին վնասներ է պատճառել Խէրսոնի, Պլօցկի, Նովօ-Ալէքսանդրիայի, Տիրասպոլի և Վալկի գաւառների գիւղերին և դաշտավայրերին։

ԿԻԷՎ։ Լիպովցում երկու զինվածներ երեկոյեան յարձակվեցին տեղական բնակիչներից մինի բնակարանի վրա և յափշտակեցին 6557 ռուբլի դրամ և փաստաթղթեր։

ՄՕՍԿՎԱ։ Օրէխով-Զուէվում, Վ. Մօրոզովի ֆաբրիկայում 10,000 բանուորներ գործադուլ արին պարգևները պակասեցնելու պատճառով։

Պրոֆէսօր Բասցվէտովի այրուն սպանելու գործի առիթով զինուորական դատարանը ուսանող Լիւբիմովին դատապարտեց մահվան պատժի, Սէրպինսկուն—15 տարով տաժանակիր աշխատանքների, մի երեխայի, որ չէր տեղեկացրել սպանութեան մասին, չորս ամսով բանտարկութեան։

ՕԴԵՍՍԱ։ Երևան հանեցին դրամանեն գնելի խմբակ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Նահանգական դատարանը քննելով «Русское Знамя»-ի խմբագիր Դուբրովինի գործը, որ մեղադրվում էր կառավարութեան մասին ստայգ տեղեկութիւններ յայտնելու մէջ, արդարացրեց նրան։

ԲՐԻՒՍԷԼ։ Պատգամաւորների պալատը վերջացրեց լեռնային բանուորների օրինագիծը։ Մաքսիմալ աշխատանքի ժամանակը որոշված է 10 ժամ։ Օրէնքը իր ոյժի մէջ կը մտնի 1912 թ. յունվարի 1-ից։ Այնուհետև ընդունեց Բելգարիայի հետ կապված առևտրի պայմանագիրը։

ԲԵՐԼԻՆ։ Միւնխէնի հրատարակչական ֆիրման պատրաստում է Գոգոլի յօբելեանական ժողովածուի հրատարակութիւնը։ Շատ լրագիրներ վիպասանին յօդուածներ են նուիրում։ «Ֆոսսիշէ Ցայտունգում» մի մեծ ֆելիետոն խօսում է Գոգոլի մասին։

ԿՈՊԷՆՀԱԳԷՆ։ «Բէյկիավիկո» թերթի խմբագիր Իօնսոն նշանակվեց Իսլանդիայի գործերի մինիստր։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ՍՈՒՔԻԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺԻՇԿ
Ա. Մ. ԱՄԻՐԽԱՆԵԱՆ
Ներքին հիւանդութիւններ
Ընդունելութիւն ամեն օր { 11—12 ժ. առաւ. / 5—6 ժ. երեկ.
Վելիամինովսկայա փող., № 10.
(օ. մ.) 100—63

Պահանջեցէք ամեն տեղ „ՕԴՕԲՐԻՆ"
Միայն ՄԻԽԱՅԻԼ ԼԵԲԵԴԵՎԻ
«Этикетъ утвержденъ прав.» մակագրութիւնով.

Գլխաւոր պահեստատեղը Դեղագործական Ապրանքների Վաճառման Կովկասեան Ընկերութեան մէջ—Թիֆլիս, Բաքու, Բաթում։

ՂՕՇԱՎԱՆԹԻ 600 ԴԵՍԵԱՏԻՆ ՏԱՅԼԱՐ ԿՈՉՎԱԾ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԸ ԵՒ ԱՐՕՏԱՏԵՂԵՐԸ կապալով տալու համար, առաջիկայ ապրիլի 4-ին, ցերեկվայ ժամը 12-ին Կարսի Հայոց Հոգևոր կառավարութեան Ատենատուն նշանակված

ԱՃՈՒՐԴ

և 8-ին՝ կրկնաճուրդ, որին ժամանակցել ցանկացողները պայմանների մասին կարող են դիմել Ատենիս ամենայն օր։

Հոգևոր կառավարութեան անդամ՝
Կորիւն քահանայ Քոթանջեան
(ա. օ.) 227. 5—3

! Կենդանի պանորամա !

կարող է ունենալ իւրաքանչիւրը՝ ձեռք բերելով ասերիկ. ծավալող խոշորացոյց, ամբողջապ. նիկէլապատ, Ջրած, կոթով և 30 հատ լուսանկ. երկմաս պատկերով, 4—2 վերջ. մեծ., Պարիզի յայտնի Ն. Պ. Գ. ատելիէի. բնական կերպով ցոյց է տալիս ուսս. արտասահմ. տեսար., քաղաքներ, պարիզեան ժանր և այլն։ Խոշորացոյցի գինը՝ 30 տեսարաններով՝ միայն 2 ր. 25 կ.։ Ճանապարհածախք 40 կ. (Սիբիր՝ 75 կ.)։ Ուղարկվում է վերագիր վճ. և առանց կանխավճ.։ Կան զանազան պատկերներ մոտ 10,000։ 5 հատը 36 կ.։ Հասցէագրել՝ С. Д. Перельманъ, Варшава, Панская 39/33.

Նորութիւն! Մեսսինայի և Կալաբրիայի երկրաշարժի պատկերները՝ 9 հատ—90 կոպ.։ Փոքր ձևի խոշորաց., 150 պատկերներով—1 ր. 75 կ.։

(10,20,31,ապ.10) (В.15736) 192. 4—2

ՆՈՐՈՒԹԻՒՆ
ԶՐԻ ՊԱՀԱՆՋԵՑԷՔ

Նոր բաց թողնված անհրաժեշտութիւնը իւրաքանչիւր մարդու համար։ Շտապեցէք ձեր մանրամասն հասցէով դիմել՝ «Волынскій Торговый Складъ», г. Пинскъ, Минской губ., Почт. ящ. № 26.
(ու. կ.) (М. 113080) 234 2—1

ՄՕԴԱՅԻՆ, ԳՈՐԾՆԱԿԱՆ, ՍԻՐՈՒՆ

Ստուգված են միայն պատէնտ ունեցող մեր «ԴԵԿԱԴԱՆՍ» ժամացոյցները։

Տղամարդկանց այդ բաց ժամացոյցները երեկ. մետալական ցինքերբլատով, ընթացքը քարերով, քոքվում է առանց բանալիի 40 ժամը մի անգամ։ Ժամացոյցի կօրպուսը ամենատափակն է մետալից հին արծաթի նման զարդարված զանազան նկարներով (նայիր նկարը)։ Երբէք չեն կորցնում իրանց սկզբնական տեսքը։ Շնորհիւ ասագին վաճառքի, մենք հնարաւորութիւն ունենք ծախել ամենաէժան դնով. միայն 3 ր. 50 կ., իսկ 2 հատը 6 ր. 50 կոպէկով։ Կանանց նոյնպիսի ժամացոյցներ 4 ր. 50 կոպէկով։

ՄԵՐ ԽՈՐՀՈՒՐԴՆ Է. Բերել տուէք միայն «Դեկադանս» ժամացոյցը և դուք միշտ շնորհակալ կը մնաք մեզանից։ Ուղարկում եմ մինչև բոպէները ստուգված ժամացոյցները վերագիր վճարով և առանց կանխավճարի, երաշխաւորելով ժամացոյցի ընթացքի ճշտութիւնը և մետալի ամրութիւնը 6 տարով։ Մինչև 4 հատի առաքումը 40 կ. (Սիբիր 75 կ.)։ Նոր ոսկէ շղթաներ բրէլոկով 75 կ. և 1 50 կ. հատը, երկմիւղ շղթան 2 ր. 50 կ. և 3 ր. 50 կ.։ Հասցէն. И. Штрумъ. фельдъ. Варшава, Св. Креста № 48. отдѣл. 23.

(յ.9, 31, փ. 6, 20, մ. 6, 20) (66705) 2. 6—6

ՇԱՏ ՔԻՉ ԱՇԽԱՏԱՆՔ ԳՈՐԾԱԴՐԵԼՈՎ

իւրաքանչիւր մարդ կարող է թէ իր և թէ իր ընտանիքի հագուստը ձեռք բերել ու ստանալ օգտաւէտ թանգագին իր՝ յայտնելով բաց նամակով իր հասցէն ВАРОНЪ И МАРКОВИЧЪ ընկերութեան։ Депо суконныхъ и мануфакт. товар. г. РОВНО, А. Вол. г.
(ու. ե.) (П. 26622) 194. 6—5

Grand Prix
ՊԱՐԻԶ 1900 Թ.
ԱՄԵՆԱԼԱՒ
ԿՐԿՆԱԿՕՃԻԿՆԵՐԸ
ԱՇԽԱՐՀՈՒՄ
ԵՌԱՆԿԻՒՆԱՁԵՒ ԴՐՈՇՄՈՎ



1860
Т.Р.А.Р.М.
С.ПЕТЕРБУРГЪ.

ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՐԷԶԻՆԱՅԻՆ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Ա.ՆՈՒՆՈՎ „ТРЕУГОЛЬНИКЪ" Ա.ՆՈՒՆՈՎ
Մ.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ
Լաւ յատկութեան համար լրիւ երաշխաւորութիւն։
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ԱՄԵՆՈՒՐԵՔ

(ե. ու.) 188. 0—4

*) Տես «Մշակ» № 58.